



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

14 օգոստոսի 2019 թվականի թիվ 89-Ա

ք. Երևան

«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՍԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2019 թվականի հունիսի 17-ին հարուցված թիվ 14 վարչական վարույթի նյութերը՝ **պարզեց**.

Հանձնաժողովի կողմից հեռուստառադիոընկերությունների գործունեության մշտադիտարկում իրականացնելիս արձանագրվել է «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) «Հ2» հեռուստաձրագրի կողմից հեռարձակված «Լրաբեր» լրատվական հաղորդման ընթացքում «Սիգարոն» (Cigarone) և «ԱՄԳ» (AMG) ընկերությունների տարբերանշաններով գովազդի խախտում:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով՝ 2019 թվականի հունիսի 17-ին Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ:

Ընկերության «Հ2» հեռուստաձրագրի կողմից հեռարձակվող «Լրաբեր» լրատվական հաղորդման ընթացքում 2019 թվականի հունիսի 15-ի եթերում (ժամը 16:00-ին, 20:00-ին և 23:00-ին)՝ ռազմական փորձագետ Վան Համբարձումյանի մամուլի ասուլիսի լուսաբանման ժամանակ տեսանյութերի պաստառներում պատկերված են եղել «Սիգարոն» (Cigarone) և «ԱՄԳ» (AMG) ընկերությունների տարբերանշաններով գովազդ, որն արգելված է «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասի ա) կետով:

Հանձնաժողովի 2019 թվականի հունիսի 14-ի թիվ 64-Ա որոշմամբ՝ Ընկերության «Հ2» հեռուստաձրագրի կողմից 2019 թվականի մայիսի 17-ի եթերում «Լրաբեր» լրատվական հաղորդման ընթացքում (մամուլի ասուլիսի լուսաբանման ժամանակ) «Սիգարոն» («Cigarone») և «Վեդի Ալկո» («VEDI ALCO») ընկերությունների տարբերանշաններով գովազդ հեռարձակելու հիմքով Ընկերության նկատմամբ կիրառվել է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված տույժը՝ տուգանելով սահմանված նվազագույն աշխատավարձի երեք հարյուրապատիկի չափով:

Ընկերության նկատմամբ վարչական տույժ կիրառելուց հետո վերջինիս իրականացվել է նույն խախտումը՝ Ընկերության «Հ2» հեռուստաձրագրի կողմից հեռարձակվող «Լրաբեր» լրատվական հաղորդման ընթացքում 2019 թվականի հունիսի

15-ի եթերում ռազմական փորձագետ Վան Համբարձումյանի մամուլի ասուլիսի լուսաբանման ժամանակ «Միգարոն» (Cigarone) և «ԱՄԳ» (AMG) ընկերությունների տարբերանշաններով գովազդ է հեռարձակվել, ինչով թույլ է տրվել «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասի ա) կետի իրավախախտում:

Հանձնաժողովը 2019 թվականի հունիսի 17-ին հարուցված վարչական վարույթի մասին ծանուցել է Ընկերությանը և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել պարզաբանումներ և բացատրություններ:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Ընկերությունը ներկայացրել է իր պարզաբանումները, համաձայն որի՝ «ՀՀ» հեռուստաձեռնարկով հեռարձակվող «Լրաբեր» լրատվական հաղորդման ընթացքում ժամը 16:00. 20:00 և 23:00 ռազմական փորձագետ Վան Համբարձումյանի մամուլի ասուլիսի լուսաբանման ժամանակ չի գովազդվել որևէ ընկերության ապրանքանիշ: Ընկերությունը տալով «գովազդ» իրավաբանական եզրույթի սահմանումը («Գովազդի մասին» ՀՀ օրենքի 2-րդ պարբերություն), այնուհետ ներկայացրել է նշված եզրույթի իր մեկնաբանությունը, համաձայն որի «Լրաբեր» լրատվական հաղորդման ընթացքում լուսաբանելով հասարակության համար խիստ հետաքրքրություն առաջացնող, Հայաստանի առկա ռազմաքաղաքական իրավիճակին վերաբերվող, ռազմական փորձագետ Վահե Համբարձումյանի մամուլի ասուլիսը, նշված ռեպորտաժը ուղղված չի եղել անորոշ թվով անձանց շրջանակին՝ ապրանքների նկատմամբ հետաքրքրություն ձևավորելու նպատակով որևէ տեղեկություն տարածելուն: Միաժամանակ Ընկերությունը հայտնել է, որ նշված իրավական կարգավորման պայմաններում Ընկերության կամահայտնությունը պետք է ուղղված լինի ապրանքների նկատմամբ հետաքրքրություն ձևավորելուն, ինչը այս պարագայում ևս առկա չէ: Ամփոփելով փաստարկները Ընկերությունը հայտնել է, որ «Հայկական երկրորդ հեռուստաալիք» ՄՊ ընկերությունը թույլ չի տվել գովազդի կամ նշված ոլորտի շրջանակներում որևէ իրավախախտում:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ընթացքի, ձեռքբերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենքը, «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, տեղեկատվության բնագավառը կարգավորող այլ իրավական ակտերը և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ հեռուստառադիոընկերությունների կողմից գովազդի հեռարձակումն իրականացվում է «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:

«Գովազդի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով սահմանվում է գովազդի հասկացությունը.

գովազդ՝ տարբեր տեսակի տեղեկատվական միջոցների օգնությամբ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, ապրանքների, գաղափարների կամ նախաձեռնությունների մասին տեղեկությունների տարածումն անորոշ թվով անձանց շրջանում, որը կոչված է ձևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ

ֆիզիկական և իրավաբանական անձի, ապրանքների կամ նախաձեռնությունների նկատմամբ:

«Գովազդի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասի ա) կետը սահմանում է.

«5. Արգելվում է՝

ա) գանգվածային տեղեկատվության էլեկտրոնային միջոցներով ցուցադրել ծխախոտի գովազդ:»

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է հեռուստահաղորդման հասկացությունը, այն է՝ **հեռուստառադիոհաղորդում**՝ հեռուստատեսությամբ կամ ռադիոյով տարածվող պատկերներն (կամ) հնչյուններն (կամ) այլ տեղեկատվություն պարունակող էլեկտրոնային կապի միջոցով արձակված սահմանափակ տևողությամբ նյութ, որը բովանդակության նկատմամբ պայմանականորեն մաստվի նյութն էր նախատեսված, համարվում է հեղինակային (կամ) հարակից իրավունքի օբյեկտ:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի համաձայն՝ հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների, լիցենզիայի պայմանների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտումների կրկնակի դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին Հանձնաժողովին գրավոր տեղեկացնելու դեպքում Հանձնաժողովն իրորոշմամբ իրավասու է կիրառելու գրավոր նախազգուշացում կամ տուգանք:

Իսկ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածը սահմանում է.

«1. Սույն օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հայտնաբերված խախտումների առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով, Հանձնաժողովն իրավախախտումը հայտնաբերելու օրվանից և (կամ) պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հայտնաբերված իրավախախտումների կրկնակի դեպքերի մասին տեղեկացվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում գրավոր նախազգուշացնում է խախտում կատարած հեռուստառադիոընկերությանը՝ պահանջելով վերացնել խախտումը և սահմանելով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ:»

Հանձնաժողովն ամրագրում է, որ «Գովազդի մասին» ՀՀ օրենքի համաձայն արգելվում է հեռուստառադիոընկերությունների կողմից ցուցադրել ծխախոտի գովազդն վարչական վարույթի շրջանակներում կասկածի տակ չի դրվում հեռուստաընկերության, որպես լրատվամիջոցի տեղեկություններ ստանալու և տարածելու իրավունքը, որն անմիջականորեն վերաբերվում է տեղեկություններ ստանալու հանրության իրավունքին, այլ խոսքը գնում է նշված հաղորդման ժամանակ մամուլի ասուլիսի լուսաբանման ժամանակ տեսանյութում երևացող պաստառներում «Cigarone», «AMG» ընկերությունների տարբերանշաններին, որոնք գովազդային պաստառներ են, նշված գովազդային պաստառը երևացել է Ընկերության կողմից հեռարձակվող «Լրաբեր» լրատվական հաղորդման ընթացքում:

Հանձնաժողովը ուսումնասիրելով վարչական վարույթի նյութերը՝ ուսումնասիրության արդյունքում արձանագրում է, որ Ընկերության կողմից ծխախոտի գովազդ հեռարձակելու համար վարչական տույժ կիրառելուց հետո 2019 թվականին Ընկերության կողմից իրականացվել է կրկին նույն իրավախախտումը՝ Ընկերության կողմից հեռարձակվել է ծխախոտի գովազդ, որը համապատասխանում է

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 21-րդ մասի հասկանիչներին:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 21-րդ մասը սահմանում է. «21. Սույն հոդվածի 3-20-րդ մասերով սահմանված հիմքերով վարչական տույժի ենթարկված հեռուստառադիոընկերության կողմից մեկ տարվա ընթացքում նույն խախտումը կրկնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:»

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով, 15-րդ հոդվածի 5-րդ մասի ա) կետով, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասով, 60-րդ հոդվածի 21-րդ մասով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց.**

1. «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 21-րդ մասով սահմանված տույժը՝ տուգանելով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՑԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

14օգոստոսի 2019թ.

ք. Երևան